

զմեզ զէպի աւելի հնագոյն ժամանակ մը: Հայերէն փոխ արմատն իւր անանցներով՝ այսպէս փոխանակ, Ենսէն (JF. Anz. 14, էջ 61) շատ իրաւամբ նոյնացուցած է ասուրական քսիս = (Ersatz, տեղը) նոյնիմաստ բառին հետ, եւ ասուրական *kunukku* կը մատնանշէ հայերէն համանիշ կնիք բառը: Հայերէն «ոսկի»ն ծագած կրնայ ըլլալ սուսմերական *guškin* բառէն, վերջնոյս նախատառին աննամանողական (dissimilatorisch) կորստով: Թէ որչափ հնագոյն ժամանակ մը ելլելու ենք այս փոխառութիւնները մեկնելու համար, անապահով է, որովհետեւ ասոնք յայտնապէս ոչ թէ ուղղակի, այլ անծանօթ միջնորդ լեզուէ մը անցած են հայերէնին. հայ կնիք բառին -նի- վանկը ոչ հայերէնի ոչ ալ ասուրերէնի ձայնական օրէքներով կրնանք *kunukku* բառին -ու- ձեւէն մեկնել: Սակայն նաեւ այս պարագային ապահով է, թէ նախապատմութեան սեամբն անցնելու պէտք չունինք:

Կարելի է թէ ամենահին ծանօթ փոխառեալ բառն ըլլայ ա'յն անունը, որով Հայերն իրենք զիրենք կը կոչեն: Հայ անունը միայն այն ենթադրութեամբ կարելի է ասուրական *Hafti* անուն հետ նոյնացնել, եթէ ընդունիք թէ *Hafti* հայերէնին անցած է այն ժամանակ, երբ դեռ «է» զիրն իբր միջնատառ ունէր՝ յառաջ քան նոյն տառին հայերէնի մէջ կրած փոփոխութիւնները: Թէ ինչպէս իրենցմէ ծագումով օտար ազգի մը անուամբ Հայերն իրենք զիրենք կոչած են, անստոյգ կը մնայ: Սակայն այս պատճառաւ հարկ չկայ, որ անոնց հպատակ եղած ըլլան, բայց կարելի է մտածել՝ թէ հին հատական երկրի մը մեծագոյն կամ փոքրագոյն մասին տիրելով անոր փառաւոր հին անունն իբր պատուանուն առած ըլլան: Ասոր իբր զուգակշիռ պէտք ենք մատնանիշ ընել ոչ այնչափ Հոռոմ = Նոր-Յոյն անունը, այլ մանաւանդ Հոռոմէական Կայսր տիտղոսը՝ գերման իշխաններու: Այդ Հայ անունն զմեզ կ'առաջնորդէ ոչ թէ Հատաց ծաղկման, այլ անոնց անկման ժամանակը:

Շատ հետաքրքրական հարց մըն է, թէ արդեօք կաւկասեան լեզուներէն հին փոխառեալ բառեր կը գտնուին հայերէնի մէջ: Եթէ ապացուցուի նաեւ անոնց գոյութիւնը, այդ պարագային ալ բնականաբար ոչ թէ կաւկասեան քաղաքակրթական ազդեցութեան մը իբր հետքեր պէտք ենք գտնոնք համա-

րիւ, այլ աւելի մնացորդներ նախնագոյն լեզուին ա'յն օտարատոհմ բնակիչներուն որոնք Հայոց հետ համաձուլուած են: Հիւրը ման այս հարցով կը զբաղի իր Քերականութեան մէջ (էջ 369 եւ շար.) եւ կը յանդիման շատ ժխտական եզրակացութեան մը՝ ընդունելով միայն քաժ բառն յատկապէս իբր կաւկասեան փոխառութիւն: Եւ նաեւ այդ զէպը կարելի է այլապէս մեկնել: Սակայն այս ժխտական արդիւնքէն ի վիճակի չեն Հայոց նախապատմութեան մասին բան մ'եզրակացնել: Բաւական երկարաձիգ ժամանակամիջոց մ'անցնելէն յետոյ շատ դժուարին է ապացուցանել լեզուականօրէն համազօրուած ու ձուլուած ժողովուրդի մը մնացորդ բառերը: Վասն զի լեզուի մը փոփոխման ժամանակ ա'յն բոլոր բառերը որոնք իբրեւ մնացորդ հին լեզուէն՝ կը պահպանուին նոր լեզուին մէջ, այնպիսի բառեր են, որոնք՝ ինչպէս փորձառութիւնը կ'ընդունէ, գլխաւորաբար արտայայտութիւններ են բոլորովին ինքնաշարժ եւ տեղական երեւոյթներու, զոր կարելի չէր եղած թարգմանել. ուստի ասոնք առ հասարակ լեզուի մը շրջապատէն (Peripherie) մնացած բառեր են որոնց սկզբնականները կրնանք ապացուցանել միայն, երբ շատ աւելի մերձուստ ձանձնանք իբր աղբիւր ծառայող լեզուն. իսկ այսպիսի ծանօթութիւն մը կը պակասի մեզի հին-կաւկասականին համար: Եւ այդպիսի լեզուի մը բեկորներն ալ շատ անգամ գաւառական արժէք միայն կ'ունենան, այնպէս որ հետագայ ժամանակի ընթացքին դիւրաւ վերստին կ'աներեւութանան:

Թէ հայերէնն իր ձայնական դրութեան վրայ՝ ինչպէս շատ անգամ կարծուած է, կաւկասեան ազդեցութեան մը որոշ հետք կը կրէ, ենթադրութիւն մըն է, որ շատ տարակուսական է: Նախ պէտք չենք չափազանցել նմանութիւնը, եւ երկրորդ պէտք չեն անտեսել այն հնարաւորութիւնը, թէ այս նմանութիւնը կրնայ տեղի ունեցած ըլլալ կաւկասեան ձայնական դրութեան վրայ հայերէնին ազդեցութեամբ: Հայերէնի ձայնական զարգացումն համեմատութեամբ միւս հնդեւրոպեական լեզուներուն շատ արագ կատարուած է, սակայն զարգացման այն ուղիով զացած է, որով միւս հնդեւրոպական լեզուներն ընթացած են: Ամէն պարագային այդ երկակողմանի ձայնական

դրութիւններու նմանութիւնը գոհացուցիչ կերպով կը մեկնուի անոնց պատմական զբաղիւթէնէն եւ հարկ չկայ նախապատմական անդրազոյն պատճառ մը փնտել:

Ուրիշ լեզուներէ հայերէնի մէջ մտած փոխառութիւններուն հետ նկատողութեան առնչու արժանի են նաեւ անոնք, որոնք հայերէնէն ուրիշ լեզուներու անցած են: Սակայն այս մասին տակաւին շատ կը պակասին նախապատրաստողական աշխատութիւններ: Բնականաբար այս տեսակէտէ խուզարկութիւններ կատարուելու են գլխաւորաբար կաւկասեան լեզուներու մասին. սակայն այդ լեզուաբանի կամ-բուններուն համեմատական քերականութեան՝ որ տակաւին գրուելու է, առաջնորդութեամբ միայն կրնանք ապահով կերպով ստոյգ ժամանակագրական արդիւնքներու հասնիլ: Բաց աստի հայերէնէ փոխառեալ բառեր մտած կը համարուին Ուզբոֆիններէն³ եւ Թուրքերէնի⁴ մէջ: Սակայն այս կրկին ենթադրութիւններն ալ անդրազոյն քննութեան մը կարօտ են. եւ եթէ հաստատուին այն պարագային՝ աւելի Ուզբոֆիններու եւ Թուրքերու նախապատմութեան համար կարելոր կ'ըլլան քան թէ Հայոց:

(Շարունակելի:) Է. Պ. ՏԵՐ-ՊՕՂՈՍԵԱՆ



Ր Ը Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ը Ն Մ Ը Ն Ր Ո Ւ Ք

իցեմ:

Լեզուաբանները եւ քերականները մեզ ասում են, թէ իցեմ եւ բայի ստորագասական ներկան է: «Եմի ստորագասական ներկան է իցեմ եւ խոնարհուած է ճիշտ եմի նման», գրում է Ա. Մէյէ (Esquisse, էջ 91, § 90: Այնուհետեւ ջանալով մեկնել իցեմ ձեւի բաղադրիչ մասերը, նա յարում է. «Ինչպէս եւ լինի՝ բայց ամէն ինչ այնպէս է ընթանում, որ կարծէք թէ ստորագասական ներկան կազմուել է բայական բունի եւ

³ Setälä, Journal de la société finno-ougrienne XVII, 31. (Pedersen, KZ. 39, էջ 464. 40, էջ 184. համա. նոյնպէս վերջիններուն հայ. թրգմ. Հեղինակին՝ Հայերէն եւ զբաղի լեզուներն, էջ 170-234: ⁴ Pedersen, KZ. 39, էջ 442. 40, էջ 81 (հայ. թրգմ. նոյն տեղ):

իցեմի միացումով. բերիցեմ, որ ծագած է *բերիցեմ ձեւից, իսկ սա հնագոյն *բերիցեմից):

Ն. Մառ իր «Հին հայերէնի քերականութիւնը» ուսերէն զբքի մէջ իցեմը համարում է հական բայի ստորագասական ձեւը, որի կցումովը բայաբուններն՝ կազմուած է մեր բայերի առաջին ապառնին կամ ստորագասական ներկան (էջ 163-164, § 201, էջ 165, § 204):

Հ. Ա. Այտընեան իր «Հայկազեան լեզուի քերականութեան» մէջ հական բայի երեք ժամանակ է դնում. եմ, էի, իցեմ, վերջինը համարելով այդ բայի ստորագասական ներկան (էջ 59):

Սակայն ես հարցնում եմ. — իցեմը որ եւ է կապ ունի՞ եմ բայի հետ եւ առհասարակ եղած է երբ եւ իցէ այդպիսի մի բայական ձեւ: Հարցումս կարող է շատ տարօրինակ թուալ, մանաւանդ որ իցեմը կիրարկուած է իբր անկախ բայական միաւոր. «Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր զօր արար Դաւիթ». «Ո՞վ է ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի» (Մատթ. Ժբ, 3, 11) եւ այլն:

Ինչնեք խնդիրն ըստ էութեան: Տեսնենք մեր բայերի ստորագասական ներկան. բերիցեմ, խօսիցիմ, աղայցեմ, քողուցում: Որոնենք այս ձեւերի մէջ մեր իցեմը: Առաջին ձեւի մէջ նա պարզապէս կցուած է բայական արմատին. բեր-իցեմ: Երկրորդ ձեւի մէջ նրա վերջին ձայնաւորը փոխուած է, բայց իր ներկայութիւնը բաւական որոշ է. խօս-իցիմ: Երրորդ բայի արմատն է աղ (հմ. աղ-ալ). իր բունը կազմուած է միջածանց աի յաւելումով՝ աղ-ա եւ սրան միացած է իցեմը, որով դարձած է *աղ-ա-իցեմ. ա-ի խմբի ին՝ անշեշտ մնալով սղած է եւ դարձած յ, որով բայն առած է աղայցեմ կերպարանքը: Չորրորդ բայի արմատն է քող (հմ. քող-ուլ). իր միջածանցն է ո, որով կազմուած է բայի բունը թող-ո. այս բունին կցուած է մեր իցեմը իցում կերպարանքով եւ տուած է քող-ո-իցում ձեւը: Այտեղ ո-ի խմբի ին՝ անշեշտ լինելով սղած եւ դարձած է յ, որով կազմուած է մի նախաւոր եւ միջանկեալ *քող-ո-յցում ձեւ: Այս նոր կազմութեան ո-յ խումբն անշեշտ մնալով՝ սղած եւ դարձած է ու, որով կազմուած է մեր դասական ձեւը՝ քող-ուցում քողուցում (հմ. լոյս-լուսոյ): Վերջին փոփոխութիւնը կարելի է բացա-

տրել նաև ենթադրելով, որ ու-ի խմբի ի-ն դարձած է լ (Հմ. որդի, որդու) եւ տուած է բողոցում ձեւը: Ն. Մառ կարծում է որ ուցում-ը ծաղած է *ոյցում ձեւից (§ 204):

Այս վերլուծութեան հիման վրայ մեր ստորադասականի չորս ձեւերը կարող ենք երկու խմբի բաժնել. առաջին՝ այն ձեւերը, որ բաղադրիչ իցեմ-ը անմիջապէս կցում են բայարմատին (բեր-ցեմ, խօս-իցեմ). երկրորդ՝ այն ձեւերը, որ իցեմ-ը կցում են բայարմատներին ու կամ ա յօդակապով (թող-ո-իցում, աղ-ա-իցեմ):

Քննելով այս ձեւերի երկրորդ բաղադրիչները, մենք տեսնում ենք, որ նրանք եւս իրենց հերթին տրոհելի միացումներ են. այսպէս՝ ից-եմ, ից-իւմ, ից-ում: Մենք այսպիսով ստանում ենք մի ընդհանուր մասնիկ՝ -ից- եւ տարատեսակ մասնիկներ եմ, իւմ, ում, որ այլ բան չեն, քան մեր սահմանական ներկայ ժամանակի դիմանիչները: Պակտում է չորրորդ՝ աւ: Մեր կարծիքով սրա պատճառն այն է, որ դեռ նախադրական շրջանում եւ լծորդութեան իցեմ ձեւը, նմանական կազմութեան ուժով՝ ձարակած է ալ լծորդութեան բոլոր բայերը եւ մենք դասական շրջանում չունենք *իցաւ մի ձեւ, որ օրինական եւ սպասելի զուգահեռը կը լինէր միւս երեք ձեւերին: Նրա մի վերապրումը պէտք է համարել Ջուլայի հին աւետարանի տուած տարբերակը. «երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեան, լոյս տայ ամենեցուն որ ի տանն իցեան» (փոխանակ՝ իցեմ) (Ն. Մառ, 204, a):

Մենք ունինք ուրեմն իցեմ, իցիւմ, իցում, եւ ենթադրական *իցաւ: Արդ՝ այս չորս ձեւերից ո՞ր մէկն է էական բայի ստորադասական ներկան: Ինչո՞ւ իցեմ-ը, ինչպէս ընդունուած է, եւ ոչ իցում-ը կամ իցիւմ-ը: Այս հարցի պատասխանը Ա. Մէյէ չունի, իսկ Ն. Մառ իրան յատուկ խիզախութեամբ ենթադրում է, թէ մեր էական բայը չորս տարբերակ է տալիս միեւնոյն բունի, որ նա բաժնում է երկու խմբի. Գլխաւոր ձեւ, որ է եւ (փոխանակ եայ լի-նելու): Այս ձեւն ունի երկու սղում. «Գրական», որ է ե (փոխ. եյ) եւ «Գոհհիկ կամ ումկական», որ է ի (փոխ. իյ): Միանալով դիմացոյց ձայներին՝ այս բունը տալիս է ե-ւմ, ե-ս, ե-յ > է: Երկրորդական խումբ, որ կազմում են ա (փոխ. այ) եւ ու (փոխ. ոյ). սրանք իրենց կարգին տալիս են՝ ա-ւմ,

ա-ս, այ եւ ու-ւմ, ու-ս, ու-յ > ու: Այս հիմքերը ց-ի կցումով կազմում են ստորադասական ձեւերը. *եա-ց-եմ, *ե-ց-եմ > ից-եմ. այ-ց-եմ, *ոյ-ց-ում > ու-ց-ում (§ 197): Այս ձեւերից միմիայն իցեմ ձեւն է, որ անշատ կիրարկում ունի (§ 204, b):

Ես նպատակ չունեմ ո՛չ Ա. Մէյէի ո՛չ Ն. Մառի վերականգնած ձեւերի նրանց մեկնութեան մէջ մտնելու. այ խմբը շատ ջուր կը վերցնէր: Ընթերցող կարող է զուգադրել մեր եւ Ն. Մառի տարբերակումները եւ որոշել նրանց համեմատական արժէքն ու պարզութիւնը: Շարունակենք մեր հետազոտութիւնը, զուգաշար կազմելով մեր ստորադասական եւ սահմանական ներկայ ձեւերից:

Սահմ. ներկայ. բեր-եմ, խօսիւմ, աղ-ա-իցում:

Ստոր. ներկայ. բեր-ից-եմ, խօս-ից-իւմ, *աղա-ից-ամ, *թողո-ից-ում:

Այս զուգաշարից պարզ երեւում է, որ ներկայ ժամանակի երկու ձեւերն իրարից տարբերում են ից մասնիկով: Գիտենք, որ մասնիկները երբեմն եղած են անկախ իմաստալից բառեր, որ ժամանակի ընթացքին դարձած են «սին», այսինքն իմաստալից զուրկ, թէեւ ոչ անարժէք, քանի որ, օրինակ, վերի ից մասնիկն է, որ կցուելով բայ բունին՝ հաստատական գործողութիւնը դարձնում է թէական: Կարծում եմ, այս մասնիկը գործիական հոլովն է մեր «իցիւմ» միջարկութիւնը: Իր նախաւոր իմաստը պարզ է ինձ համար: Բայց այս չէ կարելոք:

Ես հարցնում եմ. — ո՞ւմ է պատկանում ից մասնիկը. բունի՞ն թէ էական բային: Ուրիշ խօսքով՝ ի՞նչպէս պէտք է տրոհել ստորադասական ձեւերը. — բերից-եմ թէ՞ բեր-իցեմ. խօսից-իւմ թէ՞ խօս-իցիւմ եւ ասում եմ. ից-ը մասնիկ է, որով կազմում է ստորադասականի եւ ապառնի ժամանակի բունը, իսկ էական բայը ստորադասական ձեւ չունի. չկայ իցեմ, իցեմ իցէ ստորադասական, այլ միայն ից մասնիկ եւ եմ, ես, է ներկայի դիմանիչները ուստի դարձանալի չէ, որ իցիւմ-ը «խոնարհում է ճիշդ եմ-ի նման» (Մէյէ): Բո՛ւնն ստորադասական եւ ոչ թէ դիմանիչը: Ինչպէս ունենք կատարելի բուներ՝ աւ-ամ (արմատ. աւ), գործ-եց (արմ. գործ) այնպէս էլ ունենք ստորադասականի բուներ, որ

կազմում են ից մասնիկով. բեր-ից, խօս-ից, *աղա-ից, *թողո-ից: Վերջին երկու ձեւերի աղայց- եւ բողուց- կերպարանքները չէլտի ազդեցութեան հետեանք են: Այսպէս ուրեմն ստորադասական ներկան մի բաղադրեալ ձեւ է եւ ըստ էութեան տարբերութիւն չունի նման ձեւերից: Ահաւասիկ մի շարք աշխարհարար եւ գրարար բաղադրեալ ձեւեր. բերած եմ, բերել եմ, բերելու եմ — բերեալ եմ, բերելոց եմ. այս շարքում պէտք է դասել եւ բերից եմ, որ է բերիցեմ: Այսպիսով ից-ը բայարունի մասն է եւ ոչ թէ էական բայի. նա անշատուած է բայի բունից եւ միացած է էական բային «թիւր իմացումի» հետեանքով, որի մասին քիչ յետոյ խօսք կը լինի: Ո՛րքան դարձանալի պիտի երեւար, եթէ մէկն ասէք. «էական բայի ապառնի ձեւն է ոցեմ, որ միանալով բայերի աներեւոյթին՝ կազմում է նրանց մտադրական ապառնին. բերելոցեմ, խօսելոցեմ, աղալոցեմ... ըստ էութեան ուրիշ բան չեն ասում նրանք, որ իցեմը համարում են էական բայի ստորադասական ներկան: Տարբերութիւնն այն է, որ մի դէպքում ոց անանցը տալիս են բունին, միւս դէպքում ից անանցը բունից դատելով՝ տալիս են էական բային: Սա մեր նախադրական հայ մտքի վերձանութեան արդիւնք է, որ իր ազդեցութիւնը պահում է այսօրուան գիտունի մտքի վրայ:

Միւս կողմից գիտենք, որ հին գրութիւնը միայն էր եւ վերձանողի գործն էր դատել իրարից բառերն ու ձեւերը:

Կարող են ասել. «պէտք չէ մոռանալ սակայն, որ մենք ունինք իցեմ ձեւի անջատ գործածութիւն», մինչդեռ չունենք իցիւմ, իցում բայաձեւեր»: Անչ՛ուշտ. եւ ճիշդ ա՛յլ անջատ գործածութիւնն է, որ մոլորանքի մէջ է ձգած լեզուագէտներին եւ քերականներին, ենթադրել տալով, թէ մենք ունեցած ենք էական բայի ստորադասական ձեւ իցեմ կերպարանքով: Իրօք դա «թիւր ըմբռնում» արդիւնք է, որի մասին խօսում է Մ. Բրէալ (Essai de sémantique, էջ 56—59):

«Թիւր ըմբռնումը» կամ «թիւր իմացումը» մի սովորական երեւոյթ է լեզուների կեանքի մէջ: Խօսողների գիտակցութեան մէջ բառի որեւէ մասը կամ որեւէ մասնիկ ստանում է մի իմաստ կամ արժէք, որ բնաւ չի ունեցած նախապէս: «Թիւր իմացումի» շնորհիւ մի անգամ ստանալով այդ իմաստը

կամ արժէքը, այնուհետեւ նա դառնում է լեզուաչէն ազդակ՝ ձեւակերտ գործօն եւ ձարակում է աջ ու ձախ՝ բառերին տալով անհարազատ բայց միօրինակ կերպարանք: Նա մի մասնիկ առնում կցում է միւսին, ստեղծելով մի բոլորովին նոր կազմութիւն, որ եղած չէ նախապէս. նա պոկում է բառի մի մասը եւ կցում յարակից մասնիկին, ստեղծելով նոր բաղադրիչներ, որ բնաւ եղած չեն առաջ: Այսպէս. գերմ. Kinder (Երեսներ, զուակներ) բառն ունի իր եղակին, որ է Kind: Իրօք բառի նախաւոր ձեւն եղած է Kinder, ուր er-ը համարժէքն է լատ. is եւ յուն. ος վերջաւորութեանց: Եղակի Kind-ը հին ձեւի մաշուած կերպարանքն է: Հին գերմանացու գիտակցութիւնը այդ երկու ձեւերի տարբերիչ er մասնիկն վերագրած է յոգնակի կազմելու յատկութիւն: Նրան սկսած է թուալ, որ Kinder յոգնակի է ա՛յն պատճառով, որ վերջանում է er. եւ ահա՛, անշատելով այդ er-ը, որ իրօք բառի անբաժան մասն է, նա կցում է այս ու այն բառին եւ կազմում է յոգնակիներ. Weib-Weib-er, Buch-Bücher եւ այլն:

Նոյն արժէքը նա վերագրած է եւ Ochsen (եղն) բառի en վերջաւորութեան, համեմատելով նոյն բառի մաշուած ձեւի հետ, որ է Ochs եւ en-ը անշատ առնելով՝ կցած է այս ու այն բառին՝ կազմելով յոգնակիներ, ինչպէս Menschen եւ այլն. մինչդեռ Ochsen բնաւ յոգնակի եղած չէ, այլ եղակի եւ կշռում է սանակ. «ուկշան» բառին, որ նշանակում է եղն: (Համ. նաև. v. Henry, Gramm. comparée de l'anglais et de l'allemand, էջ 245, ծանօթ. 2:)

Այս կարգի հետաքրքրական օրինակներ ունի Ֆ. դը Մուրը (Cours de linguistique générale, էջ 233). «Մէկ ընդհանուր միտում կայ, գրում է նա. նուազեցնել արմատական տարրը ձեւակերտ տարրի օգտին, մանաւանդ երբ առաջինը վերջանում է ձայնաւորով: Այս է պատճառը, որ լատիներէն ի tāt մասնիկը (vēri-tāt-em, փոխ. vēro-tāt-em) իւրացրել է բառաբունի i-ն, որի հետեանքով բառը վերլուծուած է իրր vēr-itāt-em. Այսպէս նաև Rōmā-nus, Albā-nus դառնում է Rōm-ānus եւ այլն»: Հին լատինացին կարծած է, որ Rōmānus բառը տրոհելի է իրր Rōm-ānus եւ ստեղծած է մի նոր անանց ānus, որ բնաւ եղած չէ, եւ կցելով ուրիշ բառերի՝ կազմած է նոր անանցաւորներ:

Նկատենք մեր կողմից, որ «Թիւր իմացում» ոչ միայն մասնիկներին վերագրում է չեղած արժէքը, այլ և նրանից առնում է եղած արժէքը: Այսպէս մեր «պահ» բառը, որ յոգնակի է, այսօրուան խօսուող այլ ևս չի համարում յոգնակի և ք-ն նրա աչքում բառի անբաժան մասն է. իսկ բառի յոգն: հայցականը «պահ» դարեր շարունակ շրջելով հայ բերնի մէջ՝ մաշած է իր հ-ն և արեւելեան բարբառներում դարձած է «պաս», իսկ ս-ն այլ ևս հայցականի նշան չէ համարում, այլ բառի անբաժան մասը:

Ահա այս երեւոյթի հետեւանքով է, որ իցեմ-ը կազմուած է: Դարեր շարունակ, դեռ ևս նախագրական շրջանում, օրը հազար անգամ ասելով բերիցեմ, մտանիցեմ, սպանանիցեմ և այլն՝ հին հայի զիտակցութեան մէջ իցեմ վերջաւորութիւնն ստացած է ուրոյն արժէք, իբր բայերին ստորագասական իմաստ տուող մի մասնիկ. նմանական կազմութեան հետեւանքով այդ մասնիկը ճարակած է ալ լծորդութեան բայերը, որով բայերի մեծագոյն մասը ստորագասական ձեւի մէջ հնչած են իցեմ վախճանով. իցեմ, իցեմ ասելով՝ այս վերջաւորութիւնը

զատուած է իբր ուրոյն միաւոր, մինչդեռ իր զուգահեռները — իցիմ և իցում նուազ յաճախ հանդիպելով լեզուի տակ՝ մնացած են անանջատ:

Ինչպէս այսօր գերմաներէնի քերականութեանց մէջ կարող էք կարդալ, թէ գերման բառերի մի մասը իրենց յոգնակի կազմում են er և en մասնիկներով, այնպէս էլ մենք հիմա կարդում ենք, թէ եմ բայի ստորագասական ձեւն է իցեմ: Բայց ինչպէս er և en բնաւ յոգնակի կազմելու մասնիկ կղած չեն, այլ այդ արժէքն ստացած են «Թիւր իմացումի» հետեւանքով, ճիշդ այնպէս իցեմը բնաւ հական բայի ստորագասականը եղած չէ նախապէս, այլ յետագային «Թիւր իմացումի» հետեւանքով ստացած է այդ իմաստը: Նա մի զօղուած բառ է՝ հական բայի ներկան է դա, որ իւրացրած է ստորագասական բունի ից մասնիկը և «Թիւր իմացումի» հետեւանքով համարուած է հական բայի ստորագասական ներկայ: Դա մի իմաստաբանական կազմութիւն է և ոչ ստուգարանական:

Ն. ԱՂԱՆԾԱՆՑ

Հ. ՆԵՐՍԷՍ Վ. ԱԿԻՆԵԱՆ

Ուրախութեամբ կը յայրարարենք թէ Ուսումնասիրութիւն նախկին խմբագրապետն ու 25 ամեայ աշխատակիցը, Հ. Ներսէս Վ. Ակինեան, ողջամբ վերադարձած է Հայաստանէն, ուր ուղեւորած էր 1924 ապրիլին, նպատակ ունենալով ուսումնասիրել Երեւանի և Էջմիածնի հայերէն ձեռագիրները և հաւաքել նիւթեր հալ Մատենադրութեան Պատմութեան համար: — Թէպէտ և թիրիմացութիւն մը յեղարկարծօրէն ընդհատած է Հ. Ակինեանի ուսումնասիրութեանց ընթացքն, այսու հանդերձ վստահ ենք թէ քառամեայ աշխատասիրութեան արդիւնքն ինքնին բաւական է շահեկան ծառայութիւններ մատուցանելու հայագիտութեան: Ողջունելով անխոնջ բանասէրին վերադարձը, կը մտախոյզօր որ օր առաջ մշակէ իր համարած նիւթերն և մատչելի ընէ զանոնք հայագիտութեան:

ՍՏՐԱՂՈՒԹՅՈՒՆ

Վ Ի Ե Ն Ն Ա, Մ Ի Թ Թ Ա Ր Ե Ա Ն Ց Պ Ե Ր Ա Ն



Մամուլեան Խ., Միթար Գօշի Դատարան-նախընթացի ու հին Հայոց քաղաքացիական իրաւունքը: 1911: էջ ԺԲ 344: Ձր. 7.—

Վախիկեան Հ., Գարսիստանի Հայերը, նրանց անցելը, ներկան և ապագան: Ա. 1911: էջ Ը + 97: Ձր. 1.—

Յովնանեան Հ. Վ. Վ., Միջնադարեան ազգային տաղաչափութիւնն ուսմական: էջ 1-48: Ձր. 3.—

Ակինեան Հ. Ն., Յովնաթան Նաղաշ և Նաղաշ Յովնաթանեանը և իրենց բանաստեղծական և նկարչական ուղիստութիւնը: 1911: էջ 49-171: Ձր. 3.—

Մեմլեկեան Հ. Գ. Ս. Վ., Գրիգոր Մազազարի «Գամպոսականի» ամբողջական լուծումը: 1912: էջ ԺԱ + 162: Ձր. 3.—

Գաբրիէլեան Գիտ. Մ. Ս., Ահնայ Գառաբարաբը և արդի Հայերէն լեզուն: 1912: էջ Է + 416: Ձր. 6.—

Մարկուարտ Պրոֆ. Գիտ. Յ., Պատմութիւն հայերէն նշանագրերու և վարուց Ս. Մաշթոցի: Քրգմ. Հ. Ա. Վարդանեան: 1913: էջ Է + 59: Ձր. 1.—

Անտանեան Հ., Հայոց զբերը: 1913-1927: 80: էջ 504: Ձր. 7.—

Մատիկեան Հ. Ա., Անանուր կամ Կեղծ-Սեբէոս, քննական ուսումնասիրութիւն: 1913: էջ Է + 9: Ձր. 1-50

Թորգոմեան Տ. Վ. Յ., Երեմիա Ալեքսի Քէօմիւրճեան Մտածողոյ Պատմութիւն: 1913: էջ ԼԵ + 42: Ձր. 6.—

Վարդանեան Հ. Ա., Դատական մանր բնագիրներ և ձեռագրական համեմատութիւններ, Ա., 1913: էջ Ը + 155: Ձր. 2.—

Մարկուարտ Պրոֆ. Գիտ. Յ., Հայ Բարբառունեաց ճիւղագրութիւնը ծանօթութիւններով: Քրգմ. Հ. Մ. Հապոյեան: 1913: էջ 68: Ձր. 2.—

Մարկուարտ Պրոֆ. Գիտ. Յ., Վրական Բարբառունեաց ծագումը: Քրգմ. Հ. Մ. Հապոյեան: 1913: էջ 69-150: Ձր. 2.—

Վարդանեան Հ. Ա. Դ. Բառաքնական դիտողութիւններ, Ա.: 1913: էջ 120: Ձր. 1-50

Գիւտերբրոֆ Կ., Հոսովեական Հայաստան և հոսովեական ստորագրութիւնները Դ-2 դարերուն: Քրգմ. Հ. Մկրտիչ Վ. Նորշուան: 1914: էջ Է + 94: Ձր. 1-50

Վարդանեան Հ. Ա., Բառաքնական դիտողութիւններ, Բ.: 1914: էջ 110: Ձր. 1-50

Սրապեան Հ. Ս., Ս. Յակոբ ազգային հիւանդանոց: 1915: էջ ԻԳ + 477: Ձր. 6-50

Պալեմեարեան Հ. Գր. Ս. Վ., Կենսագրութիւններ Երկու Հայ պատրիարքներու և տան Եպիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկոսի: 1915: էջ Ը + 384: Ձր. 4-50

Դաւիթ-Բէկ Մ. Ս., Արարիկի դաւառարարութիւն: 1919: էջ ԺԱ + 292: Ձր. 4.—

Տաշեան Հ. Յ. Վ., Արշակունի գրամներ, Ա.: 1919: էջ Է + 192: Ձր. 3.—

Տաշեան Հ. Յ. Վ., Պոստական ուսումնասիրութիւնը: Ման Ա. Հետազոտական ուղեւորութիւն Ի Պոստոն Յ. Գ. Կ. Անդերոնի: Ման Բ. Ուղեւորութիւն հնախօսական հետազոտութեան Ի Պոստոն և Ի Փոքր-Հայո Փր. և Եզ. Կիւմոն Եղբայր: 1919: էջ Է + 420: Ձր. 6.—

Ֆելիքեան Հ. Պ., Յուցակ երրորդական-Հայկական հրատարակութեանց 1896-1910: 1919: էջ Է + 273: Ձր. 3-50

Խալաբեանց Բ., Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին: 1919: էջ Է + 147: Ձր. 2.—

Տէր-Պօղոսեան Գր., Նկատողութիւններ Փաւստոսի պատմութեան վերաբերելով: 1919: էջ 126: Ձր. 2.—

Ակինեան Հ. Ն. Վ., Գաղափարագիր Կաթողիկոսայ Ազգամարայ: Պատմական ուսումնասիրութիւն: 1920: էջ ԺԱ + 200: Ձր. 3.—

Մատիկեան Գիտ. Հ. Ա., Կրօնի ծաղուածը եւ դիցարանութիւն ըստ համեմատական կրօնագիտութեան: 1920: էջ ԺԲ + 334: Ձր. 4.—

Վարդանեան Հ. Ա., Նիթեր հայերէն բառագրութեան: 1920: էջ 80: Ձր. 1.—

Վարդանեան Հ. Ա., Յերոնիմեայ վասն Իրան և յերկուս դիրս առ Ի Հերրայեցոց զպատմութիւնս բաժանելոյ: 1920: էջ 82: Ձր. 1.—

Տաշեան Հ. Յ., Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին: 1921: էջ 84: Ձր. 2.—

Վարդանեան Հ. Ա., Բառաքնական դիտողութիւններ, Գ.: 1921: էջ 120: Ձր. 1-50

Ակինեան Հ. Ն., Հինդ պանդուխտ տաղասացներ: 1921: էջ 223: Ձր. 3.—

Ոսկեան Գիտ. Հ. Հ., Յովհաննէս Վանական և իւր դպրոցը: 1922: էջ Է + 122: Ձր. 1-50

Ակինեան Հ. Ն., Մատենագրական Հետազոտութիւններ, Ա.: 1922: էջ Զ + 230: Ձր. 3.—

Մովսէսեան Հ. Վ., Լոսի և Բագրատունի տան Կորիկեան ցեղի պատմութիւնը: 1923: էջ Է + 95: Ձր. 1.—

Երեմեան Ա., Չահարմահայի հայ ժողովրդական բանահիւսութիւնը: 1923: էջ Ը + 81: Ձր. 1.—

Վարդանեան Հ. Ա., Դատական մանր բնագիրներ, Բ.: 1923: Ձր. 2.—

Սաղաբէլեան Յ., Բնութեան աւերումը Անդրկովկասում, յատկապէս Հայաստանում: 1923: էջ 66: Ձր. 1.—

Կոզեան Գիտ. Հ. Ս., Մակարայեցոց Բ. դրբին հայերէն թարգմանութիւնը: 1923: էջ Է + 207: Ձր. 3.—

Վարդանեան Հ. Ա. Բառաքնական դիտողութիւններ, Գ.: 1923: էջ 130: Ձր. 1-50

Վարդանեան Հ. Ա., Յովհաննէս Ժ. Բար-Շուշանի Հայոց Կաթողիկոսին դրած թուղթը: 1923: էջ 102: Ձր. 1-50

Թերլեմէզեան Ռ., Կոմիտաս վարդապետ, նրա կեանքը: 1924: էջ 96: Ձր. 1-50

Բօսեան Հ. Ռ., Լիակատար Յուցակ Հայերէն լրագրիչներու Ի Վիեննա: 1794-1921: 1924: էջ Զ + 79: Ձր. 1.—

Ակինեան Հ. Ն. Վ., Մատենագրական հետազոտութիւններ: Հատոր Բ.: 1924: էջ 150: Ձր. 2.—

Վարդանեան Հ. Ա., Հայ զբոսորդները: 1924: էջ 155: Ձր. 150

Երեմեան Ա., Պարսկահայ նորագոյն աշուղներ: 1925: էջ 120: Ձր. 1-50

Ոսկեան Գիտ. Հ. Հ., Երգ Երգոցի առջին և Երկրորդ թարգմանութիւնը: 1924: էջ 80: Ձր. 1.—

Թերլեմէզեան Ռ., Քրիստոսաբար Կարա-Մուրզա, նրա կեանքը: 1925: էջ 68: Ձր. 1.—

Բիւզանդացի Նորայր Ն., Գնահատութիւն հայրուսակի: 1925: էջ ԻԳ + 215: Ձր. 3-50

Կոզեան Գիտ. Հ., Կամարականները, պատմական ուսումնասիրութիւն: 1926: էջ 176: Ձր. 2.—

Աղոնց Պրոֆ. Ն., Մաշթոց և նրա աշակերտները, ըստ օտար աղբիւրների: 1925: էջ 56: Ձր. 1.—

Ոսկեան Գիտ. Հ. Հ., Մատենագրական քննութիւնները 1926: էջ 192: Ձր. 2.—

Կարա Եփարդ, Տիգրան Բ. և հայ-ուղեղեան պատերազմները: Աշխատակից Հ. Գ. Վ. Գարանֆիլեան: 1926: էջ 250: Ձր. 3.—

Մարտիան Ա., Հոլանդական և Հայերը: 1926: էջ 76: Ձր. 2.—

Աղալեմէզեան Ռ., Անյայտ աղանդաւորները Հայոց մէջ ԺԶ. և ԺԷ. դարերում: 1926: էջ 76: Ձր. 1.—

Տաշեան Հ. Յ. Վ., Բառախօսական դիտողութիւններ հայերէն դիտական լեզուի մասին: 1926: էջ 221: Ձր. 3.—

Ոսկեան Գիտ. Հ. Հ., Եղիա Մուշեղեան և իր գրական արտագրութիւնները: 1927: էջ 86: Ձր. 1.—